ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Խորհրդային պետության պատմության մեջ Ադրբեջանի կողմից անցկացվող երկաթուղիների և ավտոճանապարհների անօրինակ շրջափակումը և այդ կապակցությամբ հանրապետության ժողովրդական տնտեսությունում ստեղծված ծանր վիճակը որոշակի կնիք դրեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշնանային նստաշրջանում Հայաստանի դեպուտատների դիրքորոշման վրա: Եվ դա բնական է. այսօր Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համար չկա ավելի կարևոր թեմա, քան խոր մտահոգությունը այն վիճակի համար, որի մեջ հայտնվել են Հայկական ԽՍՀ-ն և ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը այդ թշնամական ձեռնարկման հետևանքով:

Սեպտեմբերի 25-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանը բացելով՝ Մ. Ս. Գորբաչովը մասնավորապես նշեց.

«Հատկապես կասեմ այն մասին, թե ներկա պահին ինչն է առավել տագնապի առարկա: Դա Հայաստանի և Ադրբեջանի դրությունն է Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի առնչությամբ:

Անցած օրերին, չնայած ձեռնարկվող միջոցառումներին, այդ պիրկ հանգույցը չըհաջողվեց լուծել նախ և առաջ այն բանը վերացնելու տեսակետից, ինչ տեղի է ունենում երկաթուղիներում: Միայն այս գիշեր սկսեցին ընթանալ բեռներ փոխադրող գնացքները բոլոր ուղղություններով: Թվում է, ինչպես զեկուցում են ընկ. Վորոնինը, կառավարությունը, մյուս ընկերները, որոնք այնտեղ ներկայացնում են միութենական գերատեսչությունները և լուծում են հարցերը հանրապետական մարմինների հետ միասին, նշմարվում է ինչ-որ բարեփոխում:

Եթե սա ոչ թե պատահական փաստ է, այլ միտում, ապա ես չէի անի այս առաջարկությունը, որի մասին մտադրվել էի այսօր ասել: Բայց, այդուհանդերձ, ես կարծում եմ, մենք պետք է ասենք, որ նման վիճակում այդ ռեգիոնը թողնել չի կարելի:

Եթե բանը կայուն բնույթ չստանա, կարծում եմ, մեր կառավարությունը հանրապետական մարմինների հետ պետք է մշակի և Գերագույն խորհրդին առաջարկություն ներկայացնի այդ հանգույցի լուծման վերաբերյալ»:

Ինչպես ցույց տվեցին հետագա օրերի իրադարձությունները, քարելավման միտումներ չեն եղել. պետության ղեկավարը և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը մոլորության մեջ էին ադրբեջանական երկաթուղու իսկական իրավիճակի առնչությամբ: Ահա թե ինչու նստաշրջանն սկսվելուց արդեն մի քանի օր անց առավել կտրուկ արտահայտվեց հայ դեպուտատների դիրքորոշումը, որոնք շրջափակմանը տվեցին միանշանակ գնահատական. այն վերցված է պատերազմի գինանոցից և ոչ թե «կամուրջներ գցելու», կոնստրուկտիվ լուծումների որոնմամբ զբաղվելու ցանկությունից:

Մեր նախորդ հաշվետվություններում մենք փորձել էինք պատմել շրջափակման պրոբլեմի քննարկման ընթացքի մասին: Իսկ այսօր առաջարկում ենք առանձին քաղվածքներ Հայաստանի որոշ դեպուտատների ելույթներից, որոնք հնչեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում: Ընդամին, մենք չենք ներկայացնում շրջափակման գնահատումները Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, դեպուտատ Հ. Մ. Ռսկանյանի ելույթից այն կապակցությամբ, որ այն ավելի վաղ ամբողջությամբ հրապարակվել էր հանրապետական մամուլում:

Ս. Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. — Ես ուզում եմ Ձեզ, Միխայիլ Սերգեևիչ, և դեպուտատներին տեղեկանք տալ. սեպտեմբերի 21-ին Երևան չի եկել ոչ մի վագոն: Սեպտեմբերի 22-ին եկել է 62, սեպտեմբերի 23-ին՝ 64, սեպտեմբերի 24-ին՝ ոչ մի վագոն, իսկ լույս 25-ի գիշերը չորս գնացք է եկել . 201-ի փոխարեն, 123 վագոն՝ 1360-ի փոխարեն: Հիմնական բեռը եղել են ավազը, խիճը, ծղոտը և դատարկ ցիստեռնները:

Ես ելույթ եմ ունենում Հայկական ԽՍՀ-ի բոլոր ժողովրդական դեպուտատների, ընտրողների անունից, հետևաբար՝ ամբողջ հայ ժողովրդի անունից: Մենք գտնում ենք, որ մեր բարձր պառլամենտը պետք է անարգանքի սյունին գամի Հայկական ԽՍՀ-ի շրջափակման գաղափարական ղեկավարներին ու կազմակերպիչներին, քաղաքական գնահատական տա այդ փաստին, որը անուղղելի վնաս է

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՇՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հասցնում մեր կուսակցության, մեր պետության վարչին ու ռեդիկալությանը և ԽՍՀՄ ժողովուրդների միասնության, մեր միութենական ֆեդերացիայի գործունության գաղափարին: Մենք գտնում ենք, որ մեր պատասխանը պետք է մշակի իրական հոգեվիճակ, որոնք կբլացատեին նման իրավիճակի դեպքում հնարավորությունը Խորհրդային Միությունում որևէ տեղ: Այս կապակցությամբ առաջարկում եմ նրաստաշրջանի գործադրում մշտապես Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շրջափակման հարցի քննարկումը:

Ջ. Հ. ԲԱԼԱՅԱՆ.— Ընկեր Գորբաչովի ստորագրությամբ դրոշում է ընդունվել այն մասին, որ ազգային հարցերի և ազգամիջյան հարաբերությունների կոմիտեին հանձնարարված է ԼՂԻՄ-ի վերաբերյալ իր աշաջարկությունները ներկայացնել մինչև 1989 թվականի հոկտեմբերի 1-ը: Օգոստոսի 3-ին՝ առաջին ճնտաշրջանի աշխատանքի նախվերջին օրը ունեցած իր եզրակացությամբ Գերագույն խորհրդի հանձնաժողովը աշխատել էր տասը օր, նա անվանեց պայթյունավտանգ:

Ընկ. Վորոնինի զեկուցման մեջ ասված է, որ ազնաքներն արդեն սկսել են գնալ Հայաստան: Ըստ էության, խոսքը միայն Հայկական ԽՍՀ-ի շրջափակման մասին է: Բայց միևնույն ժամանակ մենք լսություն ենք մատնում այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղում շրջափակումը շարունակվում է մեկուկես տարի: Այդ մասին ԼՂԻՄ-ի դեպուտատները օգոստոսի 4-ին հարցադնդում արեցին ընկեր Գորբաչովին:

Հիմա խոսքն այն մասին է, որ մենք կատարենք այդ որոշումը և մինչև հոկտեմբերի 1-ը Գերագույն խորհրդի ընդունարանի քննարկումը առաջարկություն ներկայաքանենք Լեռնային Ղարաբաղի իրադրության շուրջը:

Հ. Ս. ԻԳԻՊՅԱՆ (Է. Քաֆարովայի ելույթի առթիվ).— Մենք հպերս, վատն ենք. մ ջերս մեր գյուղի շրջափակում ենք «տարբում», ինքներս մեր տարածք չենք թողնում գնացքներ, փակում ենք ճանապարհները: Լեզվի տակ լուր չկա, ուստի և բոլոր փաստարկները երբեմն կարելի է կառուցել լարաքանի անտեղակության, իսկ երբեմն էլ՝ աշխարհագրության տարրական գիտելիքների բացակայության վրա: Վերջերս անդրբերկվկան քարտեզը և տեսեք, թե մենք որտեղ և ինչպես կարող էինք կազմակերպել շրջափակումը և ինչպես կարող էինք ինքներս երկրաշարժի գոտի չթողնել այն բեռներով լցված վագոնները, որոնց կարիքն այդքան շատ զգում ենք: Եվ սա այն պայմաններում, երբ, փաստորեն, բոլոր խորհրդային հանքաստեղծությունները և արտադրամասերի շինարարները մեծ շինարարություն են կատարում երկրաշարժի գոտում: Մենք կանգնած ենք վճռական միջոցների ձեռնարկման անհրաժեշտության առջև:

Երեք ամսում Հայաստան չի եկել 600 գնացք: Ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով: Աշխարհի քաղաքակիրթ կամ ոչ քաղաքակիրթ որևէ երկրում նման բան չի կատարվում և չի թույլատրվում:

Լ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Շրջափակման հարցը հարկավոր է առանձին քննարկել որպես մեր ռեգիոնի արտաքին իրադրություն: Շրջափակումը շարունակվում է արդեն երկու ամիս: Հայաստանում չկան մթերքներ, չկա վառելիք: Եվ սա ամբողջ աշխարհի աչքի առաջ: Տեղի է ունենում կուսակցությունից մասսայաբար դուրս գալու երևույթ, ձեռնարկությունների ամբողջ կուսակցական կոլեկտիվներ դուրս են գալիս կուսակցությունից: Մի՞թե մենք սպասում ենք քաղաքացիական անհնազանդության:

Առաջարկված նախագծում մեզ խորհուրդ են տալիս ընպասել մինչև հոկտեմբերի 9-ը և միայն հետո վճռական քայլեր ձեռնարկել: Իսկ ի՞նչ տեղի կունենա մինչև հոկտեմբերի 9-ը:

Հայերը ստիպված են դիմել ծայրահեղ միջոցների: Ինչո՞ւ եք նրանց հասցնում այդ վիճակին: Մենք ունենք պետություն: Նա պետք է դրությունը իր ձեռքը վերցնի: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը պետք է դատապարտի շրջափակումը որպես ահաբեկման միջոց: Նա պետք է քաղաքական գնահատական տա շրջափակման:

Շրջափակման հեղինակները գործում են ամենադաժան ձևերով. նրանք ուզում են խեղդել հայ ժողովրդին: Մենք նրանց չպետք է դա թույլ տանք: Գերագույն խորհուրդը պետք է հստակորեն և հասկանալի ձևով ասի, որ ինքը այսուհետև շրջափակում չի հանդուրժի: Մենք բոլորին խնդրում ենք ըմբռնել ստեղծված վիճակի դրամատիզմը, հասկանալ, որ այլևս մենք հանդուրժել չենք կարող:

Պահանջվում է հստակ պատասխան. Գերագույն խորհուրդը կարո՞ղ է արդյոք վերացնել շրջափակումը, թե՞ չի կարող:

Ս. Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ.— Գոյություն ունի անդրկովկասյան երկաթուղի և ադրբեջանական երկաթուղի: Ուրիշ «անդրկովկասյան», այսինքը հայկական երկաթուղի գոյություն չունի: Ինչ վերաբերում է անդրկովկասյան երկաթուղուն (մենք այն անվանում ենք «կյանքի ճանապարհ»), այն շարունակում է գործել: Այսինքն Հայաստան հասցվող բեռները ստացվում են միայն անդրկովկասյան երկաթուղով. Ուստի և հարկավոր է լիովին սահմանազատել «ադրբեջանական երկաթուղի» և «անդրկովկասյան երկաթուղի» հասկացությունները:

Ստեղծված իրավիճակին մենք պետք է հստակ քաղաքական գնահատական տանք, քանզի անորոշ ու անբավարար հատատարությունը կարող է մարդկանց մեջ այն զգացումն առաջացնել, թե իբր կարելի է ամեն ինչ անել և ազատվել միայն նրանով, որ գործողությունները կգնահատվեն որպես «աշխատել են անբավարար»:

Այն պայմաններում, երբ ժողովուրդը հատնվել է այսքան հուսահատական վիճակում, մենք՝ Հայաստանի դեպուտատներս, չենք կարող հանգիստ մնալ այս դահլիճում: Մենք պետք է լինենք մեր ժողովրդի հետ:

•••

Այս օրերին Հայաստանի ժողովրդական դեպուտատների հասցեով անվերջ հուսաքով նամակներ ու հեռագրեր են ստացվում: Իրենց բովանդակությամբ դրանք բազմաբնույթ են, հուզական, իսկ դրանց հարցերը երբեմն չափից ավելի կտրական են: Ընտրողները հետաքրքրվում են, թե ինչու այդքան դանդաղ են լուծվում շրջափակման վերացման հարցերը, երկու հանրապետությունները ազգամիջյան երկպատնակության փակուղի մտքրան պրոբլեմները: Նրանց թվում է, թե դեպուտատները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ճնտաշրջանում պասիվ են:

Նման հարցադրումը անարդարացի է. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ճնտաշրջանի աշխատանքը անցկացվում է բազմապլան կերպով. դրանում հեռուստադիտողները կարող են համոզվել, թեկուզև կենտրոնական հեռուստատեսության հաղորդումներից: Նստաշրջանում քննարկվում է հարցերի մեծ մասը, որոնք սահմանում են ոչ միայն տնտեսական զարգացման ստրատեգիան, այլև մեր հասարակության հետագա դեմոկրատացումը: Դա մասսայական ինֆորմացիայի միջոցներում նրանց աշխատանքի, այսպես ասած, «տեսանելի» մասն է: Նստաշրջանում չկան ակտիվ և պասիվ պառլամենտականներ. նրանք բոլորը հավասար չափով, բացառիկ մեծ լարվածությամբ աշխատում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մշտական կոմիտեներում ու հանձնաժողովներում, որի ընթացքում մշակում, իսկ երբ դրանց հանձնաժողովները, նաև համապետական շահերի ընդհանուր տեսանկյունից պաշտպանում են նաև ռեգիոնալ և ազգային շահերը պրոբլեմների ամենալայն շրջանակում: Մասնավորապես այդ մասին հանձնաժողովի խոսակցություն տեղի ունեցավ նրաստաշրջանի աշխատանքը լուսաբանող մասսայական ինֆորմացիայի հանրապետական միջոցների ներկայացուցիչների հետ Հայաստանի ժողովրդական դեպուտատների հանդիպման ժամանակ, որը տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Մ. Ոսկանյանի նախաձեռնությամբ: Սակայն ժողովրդական դեպուտատների աշխատանքի այդ կողմի մասին կխոսվի հետագա թղթակցություններից մեկում:

Լ. ԱԶՐՈՅԱՆ
Ջ. ԲԱԼԱԳԱՅՈՒՅԱՆ
(Արմենպրեսի հատ. թղթ.)
ՄՈՍԿՎԱ